«Առանց գիտելիքի մենք ապագա չունենք»

Հանդիպած է վարչապետ Տիգրան Սարգսյանը

Կառավարություն-գիտնականներ կապի ամրապնդման անհրաժեշտության մասին երկրի նոր իշխանությունները հայտարարել են ոչ միայն ներկայացված ծրագրերում, այլեւ հետագա ելույթներում, եւ այդ ուղղությամբ ձեռնարկվող հերթական քայլը երեկ վարչապետ **Տիգրան Սարգսյանի**՝ ԳԱԱ-ում գիտնականների հետ շուրջ երկու ժամ տեւած հանդիպումն էր:

ՖՈՏՈ ԱՐԻՖ

«Եկել եմ քննարկելու այն հիմնարար խնդիրները, որ ծառացած են Հայաստանի առջեւ,–ասաց Տ. Սարգսյանը:–Մեզ համար չափազանց կարեւոր է իմանալ, թե դուք ինչպես եք մտածում, ինչ խնդիրներ են մտահոգում ձեզ, եւ դուք ինչպես եք տեսնում դրանց լուծումները: Այդ առումով մենք առաջին հերթին ձեր օգնության, խորհրդի կարիքն ունենք, քանի որ գիտությունը պետք է առաջնորդի մեզ, ոչ թե մենք՝ գիտությանը. մենք մեծ ակնկալիքներ ունենք ձեզնից: Առաջին ակնկալիքը, որը հնչեցրեց նաեւ հանրապետության նախագահը՝ մասնակցելով ձեր տարեկան ժողովին, հետեւյալն է. մեզ համար չափազանց կարեւոր է, որ դուք մեզ ներկայացնեք ԳԱԱ-ի հսկայական գործունեությունը գիտության զարգացման հեռանկարների մասին: Դուք չպետք է սպասեք, որ այդ հայեցակարգը ձեզ համար մշակի կառավարությունը կամ կառավարական որեւէ օղակ: Ձեր պատկերացումները գիտության ապագայի մասին էական նշանակություն են ունենալու: Դա առաջին հերթին կարեւոր է ոչ թե կառավարության համար, այլ նաեւ ձեզ համար, որովհետեւ այդպիսի պատկերացում ունենալով ԳԱԱ-ի, գիտության ապագայի մասին դուք կարող եք համապատասխան մթնոլորտ ձեւավորել հասարակության մեջ, եւ ձեր այդ գործառույթը ոչ մեկը չի կարող իր վրա վերցնել, դա ձեր սուրբ պարտականությունն է: Մենք պատրաստ ենք օժանդակել ձեզ այդ առաքելությունն իրականացնելու գործում: Կառավարությունը հռչակել է, որ կառուցում է գիտելիքի վրա հիմնված հասարակություն եւ տնտեսություն, որովհետեւ 21-րդ դարում այլընտրանք չկա:

Շարունակությունը՝ էջ 3

«Առանց գիտելիքի մենք ապագա չունենք»

Սկիզբը՝ էջ 1

*Ժամանակակից մտեստությունն ամենեփոխ էլ չի ենթադրում, որ արտաքնների արտահանումը պետք է գեղազանցի ապրանքների ներմուծումը: Այսօր ժամանակակից գիտությունը հիմնականում կենտրոնացած է ԱՄՆ-ում, եւ ԱՄՆ-ն առաջատարն է գիտության բնագավառում, բայց 1980 թվականից մինչ այսօր ԱՄՆ-ը ավելի շաս ներմուծում է ապրանքներ, քան արտահանում, եւ դա նրանց չի խանգարում, որ աշխարհում առաջատար լինեն գիտության ոլորտում: Եթե մենք առաջնորդվենք այն սկզբունքով, որ գիտությունը Հայաստանում կարող է զարգանալ միայն այն դեպքում, երբ մենք ավելի շաս ապրանքներ արտահանենք, գիտությունը չի զարգանա: Ժամանակակից մտեստությունը, որը հիմնված է գիտելիքի վրա, նշանակում է հետեւյալը. մենք պետք է ստեղծենք ենթակառուցվածքներ, որոնք հնարավորություն են տալիս զարգացնել գիտելիքի վրա հիմնված մտեստությունը: Ինչո՞ւ է սա Հայաստանի համար առավել արդյունավետ ճանապարհ. որովհետեւ աշխարհաքաղաքական իրավիճակն այնպիսին է, որ մենք չենք կարող մրգակցել Հնդկաստանի, Չինաստանի եւ այլ երկրների հետ արդյունաբերության զարգացման ոլորտում, մենք ապրանք արտահանող երկիր չենք կարող լինել, պետք է լինենք գիտելիք արտահանող երկիր, ծառայություններ մատուցող երկիր, որովհետեւ այդ բնագավառում է, որ մենք ունենք մրցակցային առավելություններ, այն է՝ մեր հնտելեկտուալ ներուժը: Ապրանքների արտահանումը մեզ համար իսկզբանե ունի օբյեկտիվ սահմանափակումներ: Մենք չենք կարողանում մրցել նշանս երկրների հետ, որոնք հետեւանքնիկացիոն ծախսերը, էժան աշխատուժը, նրանց աշխարհաքաղաքական դիրքն այնպիսի է, որ նրանք ունեն հարաբերական առավելություններ, որոնք գնալով խորանում են: Մեր միակ փոկությունը գիտությունն է եւ գիտելիքը»:

Հայաստանում ինչպե՞ս զարգացնել գիտելիքը եւ գիտությունը, ինչպիսի՞ն պետք է լինի ԳԱԱ-ի կառուցվածքը, ինչպիսի՞ կարգավիճակ պետք է ունենա, որպեսզի բարենպաստ միջավայր ստեղծվի գիտության զարգացման համար: Վարչապետը նշեց, որ այս հարցերի պատասխանները ակնկալում է գիտնականներից: Կառավարությունը պատրաստ է բաց եւ հրաոարակային ինքնակոմնեերի, որովհետեւ նման խնդիրները պետք է դառնան, առաջին հերթին, հանրության ինքնակոմն առակա:

«Մենք պատրաստ ենք արժեւորել գիտնականներին եւ տաղանդաբաս մարդկանց: Մենք հայտարարել ենք, որ մեր երկրի ամենաարժեքավոր քաղաքացին տաղանդավոր երիտասարդն է, որովհետեւ հասկանում ենք, որ մեր ներուժն այդտեղ է կուսակված: Իմ առած հայտարարությունը դրական արձագանք գտավ հասարկության շրջանում: Այո՛, զոռբայությունը, ցինիզմը, լկտիությունը պետք է տեղ չունենան մեր հասարակության մեջ, բայց դա մեր վերաբերմունքով է պայմանավորված: Եկեք արժեւորենք, որոշագանդենք գիտնականին բոլոր ոլորտներում: Այսեղ պասիվություն է նկատվում, ես ձեր առջեւ պարտավորություն եմ սանձձնում՝ ցանկացած գիտական ոլորտում, որտեղ մենք կունենանք նորամուծություններ, նոր գաղափարներ, հաջողություններ, ես անձամբ որոշագանդելու եմ դա, որովհետեւ դա է ճանապարհը՝ ցույց տալ հասարկությանը, որ մենք կարող ենք գիտության շնորհիվ ապահովել մեր երկրի զարգացումը: Այսինին, առաջին հերթին պետք է փոխենք հասարակության մտածողությունը, վերաբերմունքը գիտության նկատմամբ, այլապես ոչ մի հարց չի լուծվի: Այի հիվանդությունը մեր մեջ է, որովհետեւ մենք արժեւորում ենք ոչ թե գիտնականին, մտածողին, այլ՝ այն մարդուն, ով կարճ ժամանակում հասարել է վասակել մեծ գումարներ՝ չունենալով գիտելիք, ինչը, բնականաբար, լուրջ հոգեբանական բարդույթ է ստեղծում հասարակությունում, մանավանդ երիտասարդության շրջանում: Երիտասարդները չեն կարեւորում գիտելիքը, որովհետեւ նրանք գիտակցում, որ գիտելիքի շնորհիվ նրանց առջեւ դռներ են բացվելու, բայց մենք ձեզ հեռ ասրտավոր ենք անել դա: Եթե մարդը տգեղ լինի, նա կարող է միայն բալանել, փախցնել, բայց իր խելքով, կարողություններով հաջողության հասնելու համար պետք է գիտելիք ունենա: Ընդ որում, այդ պահանջը սարեցարի ավելի ու ավելի խորն ենք զգալու, որոհետեւ 21-րդ դարը արագիվում է առագություն, ափսարհը շաս արագ է փոխվում, եւ առանց գիտելիքի մենք ապագա չունենք»,–ասաց Տ. Սարգսյանը:

Այս ամենին հասնելու համար նա կարեւորեց համալսարանական կրթությունը, որովհետեւ նշված արժեքները պետք է նեղեցել համալսարանից սկսած. «Ցավոք, մենք խաթարել ենք այդ համակարգը: Համալսարաններում լավ սովորողների նկատմամբ հաճախ նաղոր ենք տեսնում, տղաների մեջ գեղազանցիկների տեսակարա կշիռը կտրուկ նվազել է, աղջիկներն ավելի շաս ժամանակ են հատկացնում գիտությանը, քան տղաները: Այդ փոփոխությունն անհրաժեշտ է անել հնարավորինս շուտ: Գիտությամբ պետք է զբաղվեն ոչ թե նրանք, ովքեր ուզում են թեկնածուական թեզ պաշտպանել, որ բանակ չգնան, այլ նրանք, ում մեջ նսած է այդ արժեքը, ով իր արագաքն պայմանավորում է գիտությամբ: Մեր կառավարությունը փորձում է նոր մտածողություն բերել: Դժվար է, կա մեծ դիմադրություն, եւ մենք ակնկալում, ենք, որ այս նոր մտածողությունը առաջին հերթին պետք է աջակցության ստանա ԳԱԱ-ում: Ես եկել եմ ձեզ մոտ՝ աջակցություն խնդրելու: Այսօր ձեր աջակցության կարիքն ավելի մեծ է, քան այն օգնությունը, որ դուք խնդրում եք կառավարությունից: Եթե ուզում եք, որ բարեշրջություններ ունենանք մեր հասարակության մեջ, պարտավոր եք աջակցել մեզ, ձեզ հեռ միասին պետք է տարածենք այս նոր մտածողությունը մեր ամենօրյա գործերով, հասարակություններով, մարդկանց հեռ շփվելիս, պետք է խոր գիտակցեք դա»:

Վարչապետը տեղեկացրեց, որ արդեն ինքնակվել են բազմաթիվ առաջարկություններ, որոնք վերաբերում են կոնկրետ ֆինանսական խնդիրներին, ափսաանհային պայմանների բարելավմանը, ափսաանվածի բարձրացմանը. «Մենք հաջգիտակցում ենք, որ եթե գիտությունը եւ գիտելիքը առաջնահերթություն են մեզ համար, դա պետք է իր արտացոլումը գտնի նաեւ բյուջեում, ֆինանսական միջոցների հատկացման ոլորտում: Չափազանց կարեւոր է, որ կարողանանք գնահատել պեսբյուջեի ծախսերի արդյունավետությունը, այդ թվում՝ ձեր մասնակցությամբ, որպեսզի դուք նա վստահ լինեք, որ մեր գիտությանը հատկացնում ենք առավելագույնը, ինչը կարող է թույլ տալ մի երկիր, որտեղ կա 120 հազար առավել արհա ընտանի. սա ահռելի մեծ թիվ է: Մեզ օժանդակություն է պետք այն առումով, որ ձեզ հեռ միասին պետք է վստահ լինեմ, որ մեր պեսբյուջեն կազմված է ռացիոնալ, միջոցների բաշխված՝ մեր ընտրած հարաբերակցությունն օպտիմալ է, եւ մեր ուզում եմ, որ դուք դրանով զբաղվեք, եւ այդ դեպքում ձեզ հեռ միասին կարող ենք ձեւավորել վստահության մթնոլորտ, ինչի կարիքն այսօր ունենք»:

Վարչապետը նաեւ լավ լուր ուներ գիտնականների համար. նա տեղեկացրեց, որ 2008 թվականին պեսբյուջեից գիտությանը հատկացվող գումարները 6,8 մլրդ դրամի դիմաց 2009-ին այն կազմելու է 8 մլրդ 200 մլն դրամ, 2010-ին՝ 9 մլրդ 350 մլն դրամ, բայց պեսբյուջեն չդեռ է լինի գիտության ֆինանսավորման միակ աղբյուրը: Պետք է համաոաասխան միջավայր ստեղծել մասնավոր-պետություն համագործակցության համար. «Մա նոր հայեցակարգ է, որը փորձում ենք ներդնել Հայաստանում, եւ պետությունը պատրաստ է իր ակտիվ մասնակցությունը բերել, որպեսզի մասնավոր հատվածի ֆինանսական միջոցները նույնպես ուղղվեն գիտությանը: Խնդիրն այն է, որ ձեզ հեռ միասին չենք կարողանում մասնավոր հատվածին առաջադրել համապատասխան գործիքներ, որոնք հասկանալի կլինեն նրանց համար, որպեսզի նրանց համար չափելի լինի սանձալի արդյունքը, ընդ որում՝ պարտադիր չէ, որ այդ արդյունքը լինի միայն կիրառական գիտության մեջ: Նրանք պատրաստ են անգամ հիմնարար գիտության մեջ գումար ներդնել, եթե կարողանանք ներկայացնել, թե ինչ կարեւոր ոլորտում ինչ կարեւոր հետազոտություններ ենք իրականացնում: Այսեղ լուրջ խնդիր ունենք, որովհետեւ կարողություններ ունեցող մարդիկ չեն վստահում մեզ: Պետք է միավորվենք ձեզ հեռ, այդ դեպքում կստեղծենք փոխադարձ վստահության մթնոլորտ, առա կկարողանանք հանդել նաեւ մասնավոր հատվածի՝ օժանդակել մեզ: Այսօրվա այցելության առաքելությունը եւ նոպասկն այն է, որ ձեզ հեռ միասին պետք է կառավարությունը ԳԱԱ հանգործակցության մի նոր էջ բացեմ: Մենք չունենք բազմաթիվ հարեցի պատասխաններ, այդ թվում՝ այն հարցերի, որոնք այսօր շոշափվում էին այստեղ: Մենք պատրաստ ենք ինքնակել ցանկացած առաջարկ, մեր նոպասկը լինելու է հեռեսվաղ. բարենպաստ միջավայր ստեղծել գիտության զարգացման համար: Ուզում եմ, որ հավատի իմ անկեղծությանը, մենք շահագրգռված ենք դրանում»:

Վարչապետը հանդիպեցրեց լսեց գիտնականների բոլոր դժգոհությունները, բարձրացված հարցերն ու դրանց լուծման առաջարկությունները:

Իսկ բարձրացված խնդիրները բազմաբնույթ էին: ԳԱԱ նախագահ **Ռաֆիկ Մարտիրոսյանը** նշեց, որ ԳԱԱ-ն, լինելով հիմնարար հետազոտությունների գլխավոր կենտրոն, կարողացել է հասնել այնպիսի արդյունքների, որոնք հայտնի են ողջ աշխարհում, բայց այսօր մեր գիտությունն իր լավագույն օրերը չէ, որ արդում է. «Մենք բազմաթիվ խնդիրներ ունենք՝ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ բնույթի: Մենք ուզաղիր ուսումնասիրել ենք կառավարության նրագիրը եւ նկատել ենք, որ գրեթե ամեն տեղ նեկա է գիտության արժեքների օգտագործման գաղափարը: Մենք հույս ունենք, որ այսուհետեւ էլ նման հանդիպումներ կունենանք՝ ինքնակելու մեր բոլոր խնդիրները»:

Այդ խնդիրներից նա առանձնացրեց ափսաանհայի պայմանների բարելավման հարցը, գիտության ենթակառուցվածքի խնդիրները: Գիտնականների ափսաավարձը պետք է բարձրացնել, բայց այսօր ավելի հրասաղ է ափսաանհային պայմանների բարելավումը:

Ակադեմիկոս **Վլադիմիր Բարխուդարյանը** բարձրացրեց հայագիտության հարցը՝ հրասաղ համարելով այս ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը:

Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Ռուբեն Սաֆրաստյանը** խնդրեց ֆինասավորել իսլամին նվիրված ենթակագրի տպագրությունը: «Թուրքագիտական եւ օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարը անգլերեն հրատարակելու համար եւս գումար է պետք:

ԵՊՀ-ի ռեկտոր **Արամ Սիմոնյանը** նշեց, որ գումարները պետք է նոպասկաուղղված ծախսել. «Կաջում եմ՝ ժամանակն է, որ սովորեմ մեր ոսեերը մենկել մեր վերակի չափով: Կան գիտական ոլորտներ, որոնք հսկայական ծախսեր են պահանջում: Պետք է հաջողություն ունենալ նայելու ճշմարտության դեմին եւ հրաժարվել այնպիսի ծախսասար գիտական հետազոտություններից, որոնք այսօր ի վիճակի չենք իրականացնել համաշխարհային մակարդակով»:

Գայանե ԳԱՍՊԱՐՅԱՆ